ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 03 օգոստոսի 2018 թվական

Արձանագրություն N 3

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի

Ներկա էին՝
Խորհրդի նախագահ՝ Արծվիկ Մինասյանը,
Խորհրդի անդամներ՝ Հայկ Այվազյանը, Ալբերտ Բաբայանը, Արտակ Ասատրյանը, Կարեն Սահակյանը, Մելիտա Հակոբյանը և Աբգար Մկրտչյանը:
Մասնակցում էին՝ Արթուր Մկրտչյանը, Արման Ավետիսյանը, Տարոն Հակոբյանը և Ռաֆիկ Բաղդասարյանը:
Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան:

Օրակարգում քննարկման ենթակա հարցեր՝
1. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:
2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին ուղղված բողոքների վիճակագրության վերաբերյալ հաշվետվություն:
3. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագիծ:

Օրակարգը հաստատվեց խորհրդի կողմից:
կողմ 7,
դեմ 0:

1. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի առաջին կիսամյակում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

Զեկուցող՝ Արթուր Մկրտչյանը:
Տեղի ունեցան մտքերի փոխանակություն, որի ընթացքում արտահայտվեցին Արծվիկ Մինասյանը, Հայկ Այվազյանը, Ալբերտ Բաբայանը, Կարեն Սահակյանը և Մելիտա Հակոբյանը: Հայկ Այվազյանը առաջարկեց հավանություն տալ հաշվետվությանը վերապահումով՝ վերջինիս մեջ ներառելով մանրամասն տեղեկատվություն (ըստ ոլորտների) 2018 թվականի առաջին կիսակյակում իրականացված ստուգումների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հաշվետվությունից հանել կիրառված վարչական տուգանքների մասին տեղեկատվությունը:
Որոշվեց՝ հաշվետվությանը հավանություն տալ վերապահումով:
Կողմ 7,
դեմ 0:

2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին ուղղված բողոքների վիճակագրության վերաբերյալ հաշվետվություն:

Զեկուցող՝ Արթուր Մկրտչյանը:
Որոշվեց՝ հաշվետվությանը հավանություն տալ:
Կողմ 7,
դեմ 0:

3. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագիծ:

Զեկուցող՝ Արթուր Մկրտչյանը:

Տեղի ունեցան մտքերի փոխանակություն, որի ընթացքում արտահայտվեցին Հայկ Այվազյանը, Կարեն Սահակյանը և Ռաֆիկ Բաղդասարյանը:

Առաջարկվեց՝ բյուջետային հայտը հաստատել վերապահումով ստորև ներկայացված փոփոխությունները կատարելուց հետո.

- հայտի նախագծից հանել պետական տուրքի համար նախատեսված 300.0 հազար դրամը,
- ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի փորձանմուշների համար ապակյա տարայի ձեռքբերման նպատակով նախատեսված 60.0 հազար դրամը <<Այլ ծախսեր>> հոդվածից տեղափոխել <<Կենցաղային և հանրային սննդի նյութեր>> հոդված:
- Կողմ 7,
- դեմ 0:

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից լրացուցիչ հանձնարարականներ տվեցին ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին, այն է՝

- 7 օրյա ժամկետում ներկայացնել առաջարկ ԱԳԼՃԿ-ներում առկա խնդիրների և դրանց լուծման եղանակների վերաբերյալ,
- Առաջարկվեց կատարել հարցում համապատասխան մարմնի՝ այն մասին, թե արդյոք ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի տեղափոխման, ինչպես նաև բենզալցակայաններում պահպանման տարաների աղտոտվածությունը կարող է պատճառ հանդիսանալ այդ վառելիքում ծծմբի տեսակարար կշռի ավելացմանը:

Խորհրդի նախագահ՝

_____ **Արծվիկ Մինասյան**

Խորհրդի անդամներ՝

_____ **Հայկ Այվազյան**

_____ **Ալբերտ Բաբայան**

_____ **Արտակ Ասատրյան**

_____ **Կարեն Սահակյան**

_____ **Մելիտա Հակոբյան**

_____ **Աբգար Մկրտչյան**

Քարտուղար՝

_____ **Սուրեն Պետրոսյան**